ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 117-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման 1-ին կետով և հաշվի առնելով «Թաուեր Փրոփերթիս» ՍՊԸ տնօրեն՝Ելենա Խաչատրյանի դիմումը՝ ***ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.***

1.«Թաուեր Փրոփերթիս» ՍՊԸ-ին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) սեփականության իրավունքով իրենց պատկանող Առինջ համայնքի Պետրոս Դուրյան թաղամաս 15-րդ փողոց թիվ4/7 հասցեի հողակտորում բազմաբնակարան շենքի («Ա», «Բ», «Գ», «Դ» մասնաշենքեր յուրաքանչյուրը եռահարկ) կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ ՝Սամվել Մեսրոպյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

2017 թ.մայիսի 2
գ.Առինջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 118-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N-2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ և 49-րդ կետերով, Առինջ համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 23-ի թիվ75-Ն որոշմամբ և հաշվի առնելով Արամիկ Սեդրակյանի դիմումը. ***ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝***

1.Արամիկ Ռազմիկի Սեդրակյանին սեփականության իրավունքով պատկանող Առինջ համայնքի վարչական տարածքում գտնվող Մարշալ Բաբաջանյան թաղամաս 16-րդ փողոց թիվ4, S=0,2001հա մակերեսով /ծածկագիր 07-011-0265-0007/, Մարշալ Բաբաջանյան թաղամաս 16-րդ փողոց թիվ 4 S=0,3002հա մակերեսով/ծածկագիր07-011-0265-0006/ , Մեր Մկրտչյան թաղամաս 16-րդ փողոց թիվ13 S=0,4 հա մակերեսով/ծածկագիր07-011-0265-0005/ և Մեր Մկրտչյան թաղամաս 16-րդ փողոց թիվ15 S=0,4հա մակերեսով /ծածկագիր07-011-0265-0008/ հողամասերի միավորումից առաջացած հողամասին տրամադրել Մարշալ Բաբաջանյան թաղամաս 1-ին փողոց թիվ4 հասցեն:

2.Արամիկ Ռազմիկի Սեդրակյանը պարտավոր է Առինջ համայնքի բյուջեի 900105204367 հաշվեհամարին վճարել հասցեի տրամադրման ծառայության վճար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արամիկ Ռազմիկի Սեդրակյանին որոշման մասին իրազեկելու օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

2017թ.մայիսի 2
գ.Առինջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 119-Ա

ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի ԹԻՎ 97-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի պահանջներով .***ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝***

1.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2017թվականի ապրիլի 11-ի «Առինջ համայնքի Արմեն Մնացականյան փողոց թիվ 56 հասցեում գտնվող հողամասի,բնակելի տան,օժանդակ շինությունների, թոնրատան և պարսպի նկատմամբ քաղաքացի՝ Հարություն Տիգրանի Ղազարյանի սեփականության իրավունքները վերականգնելու մասին » թիվ 97-Ա որոշումը

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

2017թ. մայիսի 3
գ.Առինջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 120-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԳԱԶԱԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ԿԱՅԱՆԻ ԵՎ ՊԱՐՍՊԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն որոշման 1-ին կետով, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 17-րդ, 18-րդ կետերով, հաշվի առնելով քաղաքացի՝ Հենրիկ Բադանյանի դիմումը (ծնված1962թ.) , սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզի Առինջ համայնքի Պարույր Սևակի թաղամաս 17-րդ փողոց թիվ 43 հասցեում գտնվող բնակավայրի նշանակության S=0,0400 հա մակերեսով հասարակական կառուցապատման հողամասում «Վալերիկ Գալստյան» Ա/Ձ-Ի կողմից 2017 թվականի մայիսի 2-ին կազմված ինքնակամ կառույցների հատակագիծը, ինչպես նաև այն,որ ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերին և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.***ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝***

1.Քաղաքացի՝ Հենրիկ Հոկտեմբերիկի Բադանյանին սեփականության իրավունքով պատկանող Առինջ համայնքի Պարույր Սևակի թաղամաս 17-րդ փողոց թիվ 43 հասցեում գտնվող բնակավայրի նշանակության հասարակական կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված S=54,46 ք.մ արտաքին մակերեսով գազալիցքվորման կայանը և S=1,78ք.մ. մակերեսով պարիսպը համարել օրինական:
2.Պարտավորեցնել՝ Հենրիկ Բադանյանին իր կողմից ինքնակամ կառուցված S=54,46քառ.մետր մակերեսով գազալիցքավորման կայանի համար համայնքային բյուջեի 900105204219 հաշվեհամարին վճարել 283192 /երկու հարյուր ութանաուներեք հազար մեկ հարյուր ինսուներկու/ դրամ և S=1,78 ք.մ մակերեսով պարսպի համար 9256 /ինը հազար երկուհարյուր հիսունվեց / դրամ :

3. Հողամասում ինքնակամ կառուցված շինության օրինականացման գումարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Սամվել Մեսրոպյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

2017թ.մայիսի 3
գ.Առինջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 121-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարան մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածով, հիմք ընդունելով Առինջ համայնքի ավագանու 2017թվականի հունվարի 13-ի թիվ 4-Ա որոշմամբ հաստատված կամավոր լիազորությունները և Առինջ համայնքի բնակիչներ՝ Օֆելյա Վալյաթի Հարությունյանի, Հեղինե Հովհաննեսի Կավեյանի, Արսեն Վանիկի Մանուկյանի, Էմմա Հայկի Մեհրաբյանի և Նարինե Ֆելիքսի Սաֆարյանի դիմումները, միաժամանակ, հաշվի առնելով համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմաններն ուսումնասիրող հանձնաժողովի 28.04.2017թվականի թիվ 5 նիստի եզրակացությունը. ***ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝***

1.Առինջ համայնքի բնակիչներ՝ Օֆելյա Վալյաթի Հարությունյանին, Հեղինե Հովհաննեսի Կավեյանին ,Արսեն Վանիկի Մանուկյանին, Էմմա Հայկի Մեհրաբյանին և Նարինե Ֆելիքսի Սաֆարյանին ցուցաբերել դրամական աջակցություն- յուրաքանչյուրին 30000 /երեսուն հազար/ -ական դրամ, հանձնարարել համայնքապետարանի գլխավոր մասնագետին վճարումն իրականացնել համայնքի բյուջեի բաժին 10, խումբ 07 դաս 1 , 4729 հոդվածից:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

20 17թ. մայիսի 03
գ.Առինջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 122-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման 1-ին կետով և հաշվի առնելով Արսեն Շահնազարյանի դիմումը՝ ***ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.***

1.Արսեն Ջանիբեկի Շահնազարյանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) սեփականության իրավունքով իրենց պատկանող Առինջ համայնքի «Գ» թաղամաս 8-րդ փողոց թիվ4/2 հասցեի հողակտորում երկհարկանի բնակելի տան և պարսպի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ՝Սամվել Մեսրոպյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

2017 թ.մայիսի 3
գ.Առինջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 123-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման 1-ին կետով և հաշվի առնելով Վահե Կառլենի Հարությունյանի լիազորված անձ՝ Հայրապետ Ռոմիկի Սահակյանի դիմումը՝ ***ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.***

1. Վահե Կառլենի Հարությունյանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) սեփականության իրավունքով իրենց պատկանող Առինջ համայնքի Խաչատուր Աբովյան թաղամաս 13-րդ փողոց թիվ8 հասցեի հողակտորում երկհարկանի բնակելի տան և պարսպի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:
2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ՝Սամվել Մեսրոպյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

2017 թ.մայիսի 3
գ.Առինջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 124-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի N828-Ն որոշման պահանջներով , հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2017թ մայիսի 2-ի N01/19.4/1783-17 գրությունը. ***ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝***

1.Առինջ համայնքին սեփականության իրավունքով պատկանող /ծածկագիր՝ 07-011-0012-0012 և 07-011-0012-0013/ 41,43քմ մակերսով բնակելի կառուցապատման կատեգորիայի հողամասի գործառնական նշանակությունը փոխել հասարակական կառուցապատման :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

2017 թ.մայիսի 4
գ.Առինջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 125-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N-2387 -Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ և 49-րդ կետերով, Առինջ համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 23-ի թիվ75-Ն որոշմամբ և հաշվի առնելով Նաիրա Հայրապետյանի դիմումը. ***ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝***

1.Նաիրա Լեվի Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող Առինջ համայնքի վարչական տարածքում գտնվող Պետրոս Դուրյան թաղամաս 4-րդ փողոց թիվ64 հասցեում գտնվող հողամասի բաժանումից առաջացած S_1=0,0200հա մակերեսով հողամասին տրամադրել Պետրոս Դուրյան թաղամաս 4-րդ փողոց թիվ64 հասցեն, S_2=0,0400հա մակերեսով հողամասին տրամադրել Պետրոս Դուրյան թաղամաս 13-րդ փողոց թիվ 9 հասցեն,S_3=0,0400հա մակերեսով հողամասին տրամադրել Պետրոս Դուրյան թաղամաս 13-րդ փողոց թիվ11հասցեն:

2.Նաիրա Լեվի Հայրապետյանը պարտավոր է Առինջ համայնքի 900105204367 հաշվեհամարին վճարել հասցեի տրամադրման ծառայության վճար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նաիրա Լեվի որոշման մասին իրազեկելու օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

2017 թ.մայիսի 4
գ.Առինջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 126-Ա

ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ՆԵԼԼԻ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թվականի դեկտեմբերի 31-ի N867 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի պահանջներով՝ ***ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.***

1.Ճանաչել քաղ. Նելլի Սերյոժայի Սիմոնյանին սեփականության իրավունքը, վերջինիս սեփականության իրավունքով պատկանող S=0,2000հա մակերեսով հողամասին կից՝ մինչև 20% ավել օգտագործվող 0,0400հա հողամասի նկատմամբ:

2.Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանմանը

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

2017թ.մայիսի 5
գ.Առինջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 127-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարան մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածով և հիմք ընդունելով Առինջ համայնքի ավագանու 2017թվականի հունվարի 13-ի թիվ 5-Ն որոշմամբ հաստատված բյուջեն՝ ***ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝***

1/Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի օրվա կապակցությամբ և Շուշիի ազատագրման օրվա կապակցությամբ գյուղի պատերազմի վետերաններին և զոհված ազատամարտիկների ընտանիքներին ցուցաբերել դրամական աջակցություն՝ յուրաքանչյուրին 25000/քսանհինգ հազար /-ական դրամ:

1. Հակոբյան Ամասիկ Կարապետի -25000 դր.
2. Հովհաննիսյան Ռազմիկ Մուկուչի - 25000 դր.
3. Գևորգյան Ռազմիկ Հարությունի - 25000 դր.
4. Խաչատրյան Շողիկ Միքայելի - 25000 դր.
5. Խաչատրյան Աննա Ժորժիկի -25000 դր.
6. Կարապետյան Սիրանուշ Սամվելի -25000 դր.
7. Դովլաթյան Կարինե Կիրովի - 25000 դր.
8. Մնացականյան Հռիփսիկ Անդրանիկի-25000 դր.
9. Մնացականյան Զեմֆիրա Գրիգորի - 25000 դր.
10. Ազնաուրյան Յուլինա Կարապետի -25000 դր.

2/ Հանձնարարել համայնքապետարանի գլխավոր մասնագետին վճարումն իրականացնել համայնքի բյուջեի բաժին 10, խումբ 07 դաս 1 , 4729 հոդվածից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

2017 թ. մայիսի 05
գ.Առինջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 128-Ա

ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարան մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածով, հիմք ընդունելով Առինջ համայնքի ավագանու 2017թվականի հունվարի 13-ի թիվ 4-Ա որոշմամբ հաստատված կամավոր լիազորությունները և հաշվի առնելով Առինջ համայնքի բնակիչ՝ Գագիկ Հարությունի Մանուկյանի դիմումը՝ իր դստեր՝ Աննա Մանուկյանի ուսման վարձի փոխանցման վերաբերյալ, ինչպես նաև համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմաններն ուսումնասիրող հանձնաժողովի 28.04.2017թվականի թիվ 5 նիստի եզրակացությունը , ***ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝***

1.Համայնքի բյուջեի «բարձրագույն կրթություն ծրագրի» բաժին 09, խումբ 4, դաս 1-ի 4729 այլ նպաստներ բյուջեի հոդվածից Առինջ համայնքի բնակիչ՝ Աննա Մանուկյանի ուսման վարձի համար կատարել մասնակի փոխանցում՝ 60000/վաթսուն հազար/ դրամ :

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

20 17թ. մայիսի 05
գ.Առինջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 129-Ա

ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՄԵՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ56 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԾԱԾԿՈՑԻ ԵՎ ՊԱՐՍՊԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և <Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն որոշման 1-ին կետով, 2006թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 9,10,11 կետերով, 13 կետի «ա» ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքացի՝ Հարություն Ղազարյանի (ծնված1945թ) դիմումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակելի տան և դրա կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չեն առաջացնում սերվիտուտ՝ ***ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.***

1.Վերականգնել Առինջ համայնքի Արմեն Մնացականյան փողոց թիվ 56 հասցեում գտնվող քաղաքացի՝ Հարություն Տիգրանի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող S=0,051643հա մակերեսով օրինական տնամերձ հողամասի վրա մինչև 2001թվականի մայիսի 15-ը կառուցված S=213,1քառ.մետր մակերեսով բնակելի տան, S=19,1քառ.մետր մակերեսով ծածկոցի, S=9,5քառ.մետր մակերեսով թոնրատան, S=2,5քառ.մետր մակերեսով պարսպի նկատմամբ:

2.Քաղաքացի՝ Հարություն Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող Առինջ համայնքի Արմեն Մնացականյան փողոց թիվ 56 հասցեում գտնվող բնակավայրի նշանակության տնամերձ հողամասում 2015թվականին ինքնակամ կառուցած S=8ք.մ արտաքին մակերեսով օժանդակ շինությունը համարել օրինական:

3.Պարտավորեցնել՝ Հարություն Ղազարյանին իր կողմից կառուցած S=8ք.մ արտաքին մակերեսով օժանդակ շինությանհամար համայնքային բյուջի 900105204219 հաշվեհամարին վճարել 12480/տասներկու հազար չորս հարյուր ութանասուն /դրամ

4. Հողամասում ինքնակամ կառուցված շինության օրինականացման գումարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի՝ Հարություն Ղազարյանի սեփականության իրավունքներն ամրագրված բնակելի տան, օժանդակ.շինությունների, պարսպի , հողամասի նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

6.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ Գոռ Սարգսյանի վրա:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

2017 թ.մայիսի 5
գ.Առինջ